Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 117 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ԺԱՆ ԵՎ ԱԼԲԵՐ ՊՈՂՈՍՅԱՆՆԵՐ» ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1.	Ծրագրի նպատակը	«Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամի «Ժան և Ալբեր Պողոսյաններ» արվեստի դպրոցում սովորող երեխաների ու պատանիների ուսումնական պայմանները և գործընթացը բարելավելու համար դպրոցի շենքի և հարակից տարածքի վերանորոգում և բարեկարգում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Պողոսյան» հիմնադրամ (Բելգիա, 1050 Բրյուսսել, Ֆրանկլին Ռուզվելտի փողոց 67)
4.	Ծրագիրը կատարողը	«Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամ (Գյումրի, Ա. Խաչատրյան 1, ՀՎՀՀ 05533381)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետություն, քաղաք Գյումրի, Արամ Խաչատրյան 1, բնագավառը՝ կրթական
6.	Ծրագրի բյուջեն	52,050,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	«Ռոբերտ Բողոսյան և որդիներ» հիմնադրամի «Ժան և Ալբեր Պողոսյաններ» արվեստի դպրոց հաճախող 6-18 տարեկան շուրջ 300 երեխաներն ու պատանիները (250-ը՝ անվճար հիմունքներով, 50-ը՝ մասնակի վճարումով)
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Շենքի ընթացիկ վերանորոգում և տարածքի բարեկարգում – տարեկան 10,000,000 դրամ և 30,000,000 դրամ 3 տարվա համար, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը. 2. Կոմունալ-կենցաղային ծախսեր – տարեկան 4,150,000 դրամ և 12,450,000 դրամ 3 տարվա համար, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը. 3. Դաշնամուրի, ջութակի, վոկալի, փողային նվագարանների, ազգային նվագարանների, հարվածային գործիքների, ազգային և ժամանակակից պարերի, կիրառական արվեստի ուսուցման գործընթացի բնականոն ընթացքի ապահովման համար անհրաժեշտ ուսումնական և այլ պարագաների ձեռքբերում - տարեկան 400,000 դրամ և 1,200,000 դրամ 3 տարվա համար, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը. 4. Դաշնամուրի, ջութակի, վոկալի, փողային նվագարանների, ազգային նվագարանների, հարվածային գործիքների, ազգային և ժամանակակից պարերի, կիրառական արվեստի ուսուցման գործընթացի համար անհրաժեշտ երաժշտական գործիքների ներմուծում-տարեկան 2,000,000 դրամ և 6,000,000 դրամ 3 տարվա համար, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը. 5. Ծրագրային և ֆինանսական աուդիտի իրականացման ծախսեր-տարեկան 800,000 դրամ և 2,400,000 դրամ 3 տարվա համար, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի փետրվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Այս ծրագրի շրջանակներում ծախսվում է՝ 1. տարեկան 10,000,000 դրամ շենքի և տարածքի վերանորոգման և բարեկարգման համար՝ 30,000,000 դրամ երեք տարվա համար. 2. տարեկան շուրջ 900,000 դրամ էլեկտրականության համար՝ 2,700,000 դրամ 3 տարվա համար. 3. տարեկան շուրջ 250,000 դրամ ջրամատակարարման և ջրահեռացման համար՝ 750,000 դրամ 3 տարվա համար. 4. տարեկան շուրջ 3,000,000 դրամ գազի համար՝ 9,000,000 դրամ 3 տարվա համար. 5. տարեկան 400,000 դրամ գրենական պիտույքների և տնտեսական պարագաների համար՝ 1,200,000 դրամ երեք տարվա համար. 6. տարեկան 2,000,000 դրամ երաժշտական գործիքների և ուսումնական պարագաների ներմուծման համար՝ 6,000,000 դրամ երեք տարվա համար. 7. տարեկան 800,000 դրամ կազմակերպության ֆինանսական և ծրագրային աուդիտի իրականացման համար՝ 2,400,000 դրամ երեք տարվա համար:

11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման հետ կապված ծախսեր այս ծրագրում չեն նախատեսված, քանի որ կազմակերպությունը վարչական և կազմակերպչական ծախսերի համար ունի առանձին ֆինանսավորում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Գյումրու քաղաքապետարանի և Շիրակի մարզպետարանի կրթության և մշակույթի բաժիններ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունը կիրականացվի ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք կներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ